ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ

ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«23» նոյեմբերի 2016 թվականի № 130-Ն

<<ԱՐԱԳԱԾ-ՊԵՌԼԻՏ>> ԲԲԸ-Ի ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով <<Արագած-պեռլիտ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ ընկերություն) վարչական բողոքը և համադրելով դրանք ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության (այսուհետ՝ տեսչություն) 26.09.2016թ. ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի պեռլիտի հանանքավայրի <<Արագած-Պեռլիտ>> ԲԲԸ-ում ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության կողմից ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 26.09.2016թ. թիվ 300004 հանձնարարագրի հիման վրա իրականացված ստուգման 3-04 ակտի հետ, պարզվել է, որ ընկերության կողմից խախտվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի պահանջները, 05.12.2012թ. ՊՎ-348 պայմանագրով ամրագրված պայմանագրային պարտավորությունները, մասնավորապես՝

1. Սահմանված կարգով չի վարվել երկրաբանական, մարկշեյդերական փաստագրություն, ամենօրյա շարժի գրանցամատյանը:
2. Ամբողջությամբ չեն կատարվել լիազոր մարմնի մարմնի՝ օրենսդրության պահանջների պահպանման նպատակով օրենքով սահմանված կարգով տրված ցուցումները:
3. Օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ հաշվետվություններով ներկայացված տվյալները հավաստի չեն:
4. Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծով սահմանված հանքաստիճանի բարձրությունը բացահանքի որոշ հատվածներում չի պահպանվում:
5. Օգտակար հանածոյի արդյունահանումը օգտակար հանածոյի արդյունահանման նախագծով և պայմանագրով նախատեսված ժամկետների համապատասխան չի կատարվում
6. Օգտակար հանածոյի արդյունահանումը ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված չափաքանակների համապատասխան չի կատարվում:

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին - 7- րդ կետերով, հաշվի առնելով վարչական վարույթ իրականացնող հանձնաժողովի 13.12.2016թ. և 20.12.2016թ. արձանագրությունները, ինչես նաև վարչական վարույթի ընթացքում ձեռքբերված բոլոր ապացույցները, լսումների ընթացքում ներկայացված դիրքորոշումները և իրավաչափ համարելով վարչական վարույթ իրականացնող հանձնաժողովի 20.12.2016թ. արձանագրությամբ ամրագրված որոշումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Մերժել <<Արագած- Պեռլիտ>> ԲԲԸ-ի 2016 թվականի նոյեմբերի 21-ի <<ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության հյուսիսային տարածքային ստորաբաժանման կողմից 01.11.2016թ.-ին կազմված թիվ 3-04 ակտի, նույն ակտի պարզաբանումների, հանձնարարական-ծանուցման, բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգման թիվ 300003 ակտի, վարչական իրավախախտման համար տույժ նշանակելու մասին թիվ 3-04 որոշման և ստուգողների գործողությունների դեմ>> թիվ ԱՊ-38 վարչական բողոքը:
2. Հանձնարարել նախարարության աշխատակազմի ընդերքի վարչությանը, ընդերքի պետական տեսչությանը և իրավաբանական բաժնին քննարկել և ներկայացնել առաջարկ արդյունահանման տարեկան ծավալները չապահոված ընկերություններին զգուշացում տալու և այդ հիմքով ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու առանձնահատկությունների վերաբերյալ՝ հետագայում իրավական ակտի նախագիծ կազմելու և սահմանված կարգով ներկայացնելու նպատակով:
3. Սույն հրամանը կարող է բողոքարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետում:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ